**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

# Ո Ւ Ղ Ե Ր Ձ

«05» դեկտեմբերի 2024 թվականի

## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի առաջարկությամբ, 1985թ-ից ի վեր, ամեն տարի այս օրը նշվում է որպես Կամավորության միջազգային օր:

Սիրելի՛ կամավորներ, սրտանց շնորհավորում եմ ձեզ Կամավորության միջազգային օրվա առթիվ:

Թող որ յուրաքանչյուրիդ կողմից արված կամավոր գործ դառնա մեծ ներդրում մեր հասարակության զարգացման և բարօրության համար:

Այս օրը ևս մեկ հարմար առիթ է գնահատելու մեր կամավորների գործունեությունն ու նրանց ներդրած ջանքերը հանուն մեր երկրի տնտեսական և սոցիալ-մշակութային զարգացման:

Այս օրն այն մարդկանց համար է, ովքեր ընտրել են մարդկությանն անշահախնդիր ծառայելու ու բարդ իրավիճակներում հայտնված անձանց աջակցելու ուղին, ովքեր հանուն համընդհանուր արժեքների, վտանգելով սեփական կյանքը և համախմբվելով կամավորության վեհ գաղափարի շուրջ, մասնակցում են կամավորական տարբեր աշխատանքների:

Կամավորությունը մերօրյա լավագույն հնարավորությունն է նաև զարգանալու, մասնագիտանալու և փորձ ձեռք բերելու համար:

Փառք ու պատիվ բոլոր կամավորներին և կամավորության վեհ գաղափարներին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**